

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Մարգահովիտ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Մարգահովիտ	Ավագանու հերթական նիստ	18.11.2020թ.	15:00	Մարգահովիտի համայնքապետարանի նիստերի դահլիճում (գ. Մարգահովիտ, 2 փողոց 23)

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ **Մարգահովիտ համայնքի ավագանին ո ղ ո շ ու մ է.**

Հաստատել 2020 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 07 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Մարգահովիտ համայնքի ավագանու 2020թ. նոյեմբերի 18-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ս. Անանյան

2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին.

զեկ. Ս. Անանյան

3. Գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Գ. Կոծինյան

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի եռամսյակային հաշվետվության հաղորդումը հաստատելու մասին

զեկ. Գ. Կոծինյան

5. Հանձնաժողով կազմելու մասին

զեկ. Ս. Անանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ
ԱՆՀԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ **Մարգահովիտ համայնքի ավագանին**

ո թ ո շ ու մ է՝

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Մարգահովիտ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել փոփոխություններ և ավելացնել հետևյալ գույքը.

1. Ճանապարհային խողանակ HO-86 - 1 հատ - 990.000 (ինը հարյուր իննսուն հազար) դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ
ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝ Մարգահովիտ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Ի գիտություն ընդունել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին երրորդ եռամսյակի եռամսյակային հաշվետվության հաղորդումը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետի համապատասխան՝ **Մարզահովիտ համայնքի ավագանին որոշում է.**

1 Համայնքի գոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝

1.Սասուն Ս. Անանյան - համայնքի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ.

2.Սայադ Ա. Խաչատրյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,

3.Սուսան Վ. Սարուխանյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի քարտուղար,

4.Գևորգ Սարգսյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ,

5. Ժորա Գասպարյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ,

6. Արման Խաչատրյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ,

7. Աննա Հարությունյան - համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ:

2. Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 7-օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

3. Ուժը կորցրած ճանաչել Մարզահովիտ համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 09-ի թիվ 30-Ա որոշումը: